ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմիի 1

№ 1916-Ա « 19 » մայիսի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի
Ն 269-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1. Երևանի քաղաքապետի 2016 թվականի փետրվարի 3-ի «Ավտոբուսային երթուղու սպասարկման ծառայության վճար սահմանելու մասին» Ն 269-Ա որոշման 1-ին կետում՝ «Երևան քաղաքի ներքաղաքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումներ իրականացնող՝ 10 և ավելի ավտոբուսային երթուղի սպասարկող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար ավտոբուսային երթուղու սպասարկման ծառայության վճարը՝ յուրաքանչյուր միավոր տրանսպորտային միջոցի համար, սահմանել ամսական 4500 (չորս հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ /ներառյալ ԱԱՀ/» բառերը փոխարինել «Երևան քաղաքի ներքաղաքային ավտոբուսային, միկրոավտոբուսային և տրոլեյբուսային կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար ավտոբուսային, միկրոավտոբուսային և տրոլեյբուսային երթուղիների սպասարկման ծառայության վճարը՝ յուրաքանչյուր միավոր տրանսպորտային միջոցի համար, սահմանել ամսական 34000 (երեսունչորս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ /ներառյալ ԱԱՀ/» բառերով:

2.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի և «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի վրա:

3.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ